ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«19» 09 2024թ.
№ ՊՄՇՊ-Գկտ-1454

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք, Գյուրջյան փ. 17շ. 91 տարածք
ՀՎՀՀ 00801026
հեռ. (010) 64 00 84
էլ. փոստի հասցե՝ viola.diag@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՎԻՈԼԱ» ՍՊ ընկերության միջև 07.06.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-9/3-9 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՎԻՈԼԱ» ՍՊ ընկերությունը 2024թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում պետք է մատակարարեր համապատասխանաբար 1 հատ ընդհանուր 2 հատ «Շրջանառվող իմունոկոմպլեկսներ CIC C1Q IgG» և 2 հատ «Շրջանառվող իմունոկոմպլեկսներ CIC C3D IgG»:

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված 14.08.2024թ. գրության համաձայն Ընկերությունը հրաժարվում է կնքված պայմանագրի շրջանակներում 19-րդ չափաբաժնով նախատեսված 2 հատ «Շրջանառվող իմունոկոմպլեկսներ CIC C1Q IgG», 20-րդ չափաբաժնով նախատեսված 2 հատ «Շրջանառվող իմունոկոմպլեկսներ CIC C3D IgG» ապրանքատեսակի մատակարարումից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ՀՀ պաշտպանության նախարարությունը **2024թ. սեպտեմբերի 19-ին** միակողմանի **մասնակի** լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Տեղեկացնում ենք, որ «ՎԻՈԼԱ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **1987** ՀՀ դրամ՝

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն), ինչպես նաև Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ **42,720** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ **64,080** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2024թ. սեպտեմբերի 27-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **42 720** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **64 080** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՎԻՈԼԱ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև **2024թ. սեպտեմբերի 27-ը** ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2076 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ